ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Աննա Պետրոսյան, ՀՀ ֆինանսների նախարարության եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության վարչության միջազգային հարկային և մաքսային հարաբերությունների բաժնի գլխավոր մասնագետ.

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Ք. Հաագա (Նիդերլանդների Թագավորություն), 2023 թվականի հունիսի 26-ից մինչև հունիսի 30-ը:

3. Հրավիրող կողմը.

Նիդերլանդների ֆինանսների նախարարության Ֆինանսների և էկոնոմիկայի ազգային ակադեմիա.

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

«Հարկում» թեմայով ամառային դասընթացին մասնակցելը և մասնագիտական գիտելիքների զարգացումն էր:

5. Քննարկված թեմաները.

Դասընթացի ընթացքում, մասնավորապես, քննարկվել են հետևյալ թեմաները.

1) Ընդհանուր տեղեկություններ Նիդերլանդների հարկային վարչարարության վերաբերյալ,

2) Ավելացված արժեքի հարկ, եկամտահարկ, շահութահարկ,

3) Հարկերը և տեխնոլոգիաները,

4) Հարկաբյուջետային տեղեկություններ և քննչական ծառայություն,

5) Փոքր և միջին ձեռնարկությունների հարկային կարգապահության ռիսկերի կառավարում,

6) Հարկման նպատակով տեղեկությունների ավտոմատ փոխանակում:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Դասընթացի ընթացքում հանդես եմ եկել ելույթով Հայաստանի Հանրապետությունում գործող հարկային համակարգի վերաբերյալ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Դասընթացի ընթացքում որևէ որոշումների ընդունում կամ փաստաթղթի ստորագրում նախատեսված չէր:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Դասընթացի ընթացքում ձեռքբերված գիտելիքները և Նիդերլանդների հարկման համակարգի առաջադեմ փորձի ուսումնասիրությունը օգտակար կլինեն նախատեսվող աշխատանքների արդյունավետության բարձրացման տեսանկյունից:

9. **Ստորագրությունը, ամսաթիվը:**

03.07.2023թ.